



<<ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ  
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,  
հեռ. (+374 10) 510-910 \*9105, (+374 10) 8686  
էլ. փոստ bank @aeb.am

Հաստատված է «ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության  
«.....» «.....» 2022թ. թիվ .....որոշումով  
Ուժի մեջ է մտել՝ «.....» «.....» 20..... թ.

## ՕՖԵՐՏԱ

Telcell Wallet բջջային հավելվածի օգտատիրոջ համար սահմանափակ գործառնություններով  
հեռավար բանկային հաշիվ բացելու և սպասարկելու վերաբերյալ

- 1.1. «ԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) առաջարկում է «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սպասարկվող Telcell Wallet բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) օգտատիրոջը (այսուհետ՝ Հաճախորդ) Բանկում հեռավար բացել սահմանափակ գործառնություններով բանկային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) և սպասարկվել սույն օֆերտայով (այսուհետ՝ Օֆերտա) սահմանված կարգով և պայմաններով:
- 1.2. Հավելվածում Հաճախորդի կողմից Օֆերտային համաձայնություն տրամադրելը (ակցեպտավորելը) համարվում է, որ Օֆերտայով սահմանված պայմաններով Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Հաշվի բացման և սպասարկման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):
- 1.3. Բանկը Հաշիվը բացում է Ընկերության կողմից նույնականացված Հաճախորդի համար:
- 1.4. Բանկն իրավունք ունի չբացել Հաշիվը, չսպասարկել Հաշիվը և/կամ լուծել Պայմանագիրը՝ եթե Ընկերությունը պատշաճ չի նույնականացրել Հաճախորդին:
- 1.5. Հաշվին կարող են մուտքագրվել գումարներ բացառապես Հավելվածում Հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշիվը (այսուհետ՝ Դրամապանակ) համալրվելու նպատակով, իսկ Հաշվից գումարները ելքագրվում են ուղղվելով Դրամապանակ (բացառությամբ եթե գործում են Դրամապանակի համալրման սահմանափակումներ) և Հաճախորդը չի կարող դրանք կանխիկացնել կամ օգտագործել սույն կետով չսահմանված այլ նպատակներով: Բանկի կողմից Հաշվի բացման և սպասարկման համար վճարներ չեն սահմանվում:
- 1.6. Հաշվի սպասարկման այլ պայմանները կարող են սահմանվել նաև Հաշվի տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը (Պայմանագիր հասկացությունը ներառում է նաև Ամփոփագիրը) և հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում (<http://www.aeb.am>): Ամփոփագիրը Բանկի կողմից կարող է միակողմանի լրացվել և/կամ փոփոխվել, որն ուժի մեջ է մտնում Բանկի ինտերնետային կայքում հրապարակվելուն հաջորդող 7-րդ օրվանից, եթե ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ չի սահմանվում այդ փոփոխություններով:
- 1.7. Պայմանագիրը կնքելով Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Պայմանագրին և համաձայնվել է, որ Հաշիվը սպասարկվի Պայմանագրով սահմանված պայմաններով:
- 1.8. Պայմանագիրը կնքելով Հաճախորդը համաձայնություն է տալիս Բանկին Հաշվի բացման և/կամ փակման, մասին տեղեկությունները տրամադրելու հարկային մարմիններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենք) սահմանված դեպքերում և կարգով այլ պետական մարմիններին:
- 1.9. Պայմանագիրը կնքելով Հաճախորդը համաձայնություն է տալիս Բանկին Հաշվի բացման և/կամ փակման, Հաշվով կատարված գործառնությունների, Հաշվի մնացորդի մասին տեղեկությունները տրամադրելու Ընկերությանը:
- 1.10. Պայմանագիրը կնքելով Հաճախորդը հաստատում է և տալիս է իր համաձայնությունը հետևյալին՝
  - ա) ծանոթացել է Պայմանագրին ամբողջությամբ, այն պարզ է և հասկանալի է իրեն:
  - բ) ծանուցվել է, որ Բանկը մտադիր է մշակել Հաճախորդի անձնական տվյալները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին և Պայմանագրին համապատասխան՝ Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատելու և/կամ մեկանգամյա գործարք կատարելու համար հաճախորդի ինքնության ստուգման և նույնականացման գործընթացի ապահովման նպատակով,
  - գ) համաձայն է, որ Բանկի կողմից մշակվեն հաճախորդի հետևյալ անձնական տվյալները՝ անուն,

ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան տվյալներ, անձը հաստատող փաստաթղթի, էլ փոստի տվյալներ, բնակության, հաշվառման հասցեի տվյալներ, ռեզիդենտության կարգավիճակ, փոխկապակցված անձանց մասին տվյալներ:

դ) համաձայն է, որ հաճախորդի ինքնության ստուգման և նույնականացման գործընթացի ապահովման նպատակով Բանկը կատարի ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ՝ կապված նրա անձնական տվյալները հավաքելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ կամ այլ գործողություններ կատարելու հետ:

ե) համաձայն է, որ Բանկի կողմից ծառայությունների մատուցման ապահովման և/կամ Բանկի իրավունքների պաշտպանության անհրաժեշտության դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ հաճախորդի անձնական տվյալները տրամադրվեն ՀՀ կենտրոնական բանկին, վարկային բյուրոներին, դատարաններին, իրավապահ մարմիններին, ՀՀ պետական մարմիններին:

զ) հաստատում է, որ Բանկին տրամադրում է ամբողջական, ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն, ցանկացած փոփոխությունների դեպքում էլ՝ պարտավորվում է Բանկին գրավոր տեղեկացնել փոփոխությունների մասին՝ 3 բանկային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ սխալ տեղեկատվություն տրամադրելու կամ փոփոխությունների մասին չտեղեկացնելու համար ծագած պատասխանատվությունը և/կամ բացասական հետևանքները կրելու է հաճախորդը:

է) համաձայն է, որ Բանկը մշակի իր անձնական տվյալներն առանց ժամկետային սահմանափակման:

ը) ծանուցվել է, որ Բանկում պահվող իր անձնական տվյալներում տեղ գտած սխալները կարող են ուղղվել իր գրավոր դիմումի և/կամ համապատասխան հիմքերի ներկայացման/առկայության/ դեպքում:

թ) ծանուցվել է, որ պայմանագրով տրվող սույն համաձայնությունը կարող է հետ կանչել՝ եթե չունենա Բանկի նկատմամբ չկատարված պարտավորություններ և գրավոր տեղեկացնի Բանկին նրա ծառայություններից հրաժարվելու մասին:

ժ) ծանուցվել է Բանկում ներդրված ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

- 1.11. Հաշվին դրամական միջոցների մուտքը և ելքը կատարվում է միայն Պայմանագրով սահմանված նպատակով և պայմաններով:
- 1.12. Բանկը կարող է մերժել Հավելվածում Հաճախորդի դրամապանակի համալրումները եթե՝ Հաշվին գումարների փոխանցման վավերապայմանները սխալ են, թերի են, և/կամ Հաճախորդը չի նույնականացվում, Պայմանագրով սահմանված այլ դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
- 1.13. Հաճախորդը տալիս է իր անհետևանքների համաձայնությունը և հանձնարարականը Բանկին անակցեպտ կարգով հաշվանցել Հաճախորդի նկատմամբ իր դրամական պահանջները Հաշվին մուտքագրվող գումարներից:
- 1.14. Հաշվի վրա կարող են կիրառվել սահմանափակումներ Պայմանագրով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 1.15. Բանկը պարտավորվում է Հաշիվը սպասարկել Պայմանագրով սահմանված պայմաններով:
- 1.16. Հաճախորդը պարտավոր է տրամադրել Բանկին իր գործող էլեկտրոնային փոստի հասցեն և իր բջջային հեռախոսահամարը, ապահովել այդ կապի միջոցների մշտական հասանելիությունը, դրանցով ուղարկված պարտադիր տեղեկատվությունը (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանկի կողմից հաճախորդին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվությունը, ներառյալ՝ հաշվի քաղվածքները) ստանալ և ծանոթանալ ուղարկման օրվանից: Ընդ որում՝ պարտադիր տեղեկատվություն հաճախորդին ուղարկվելու օրվանից 15 օրացույցային օրվա ընթացքում Հաճախորդի կողմից Բանկին գրավոր առարկություններ չներկայացնելը հաստատում է, որ Հաճախորդը համաձայնվել է ուղարկված տեղեկատվությանը:
- 1.17. Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել Հաշվի սպասարկման համար Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները, փաստաթղթերը և համաձայնությունները:
- 1.18. Բանկը երաշխավորում է Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը համաձայն ՀՀ օրենսդրության:
- 1.19. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով և/կամ դրանց հիման վրա ընդունված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ Բանկն իրավասու է կասեցնել, դադարեցնել(ընդհատել), և/կամ մերժել Հաճախորդի և/կամ hoգուտ հաճախորդի գործարքների կատարումը:
- 1.20. Բանկը պատասխանատվություն չի կրում Հավելվածը չգործելու, սահմանափակվելու, ծրագրային կամ տեխնիկական այլ պատճառներով Հաճախորդի դրամապանակը չհամալրվելու դեպքերում:

- 1.21. Հավելվածում ՕՖերտային ծանոթանալուց հետո դրան համաձայնություն տալու (ակցեպտավորելու) մասին Հաճախորդի կողմից հաստատող նշումը կատարվելու պահից Պայմանագիրը համարվում է կնքված, և այն ունի Բանկի և Հաճախորդի կողմից ձեռագիր ստորագրված թղթային պայմանագրին համարժեք իրավական ուժ և նշանակություն:
- 1.22. Պայմանագրի գործողությունը սահմանվում է անորոշ ժամկետով:
- 1.23. Պայմանագիրը կարող է լուծվել՝ Դրամապանակը փակվելու (Դրամապանակը չի կարող փակվել եթե Հաշվին մնացորդը զրոյական չէ), դեպքում, ինչպես նաև Կողմերից յուրաքանչյուրի կողմից միակողմանի՝ Հաշվի մնացորդը զրոյական լինելու և Պայմանագրից հրաժարվելու մասին մյուս կողմին 3/երեք/ բանկային օր առաջ ծանուցով, Պայմանագրի լուծումը հիմք է Հաշիվը փակվելու համար:
- 1.24. Հաճախորդը Պայմանագրից բխող բողոք-պահանջները կարող է ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր Բանկը չի կնքել:
- 1.25. Պայմանագրից բխող վեճերը Կողմերի միջև բանակցություններով չլուծվելու դեպքում՝ ենթակա են լուծման ՀՀ դատարանների կողմից: